

# ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

23 ԲՇ.

## ՄՐԲՈՑՆ՝ ԴԱԻԹԻ ՄԱՐԳԱՐԻՆ ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԵՆ 1.2-12** Եղբայրներ, դուք ձեզ շատ երջանիկ համարեցեք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ կ'իյնաք: Գիտցեք, որ փորձութիւնը համբերութիւն կը ծնի, եթէ ձեր հաւատքը փորձին դիմանայ: Իսկ համբերութիւն պէտք է ունենալ մինչեւ վերջ, որպէսզի ամբողջական եւ կատարեալ ըլլաք, եւ ձեզի ոեւէ բան չպակսի:

Եթէ ձեզմէ մէկը կը զգայ թէ անհրաժեշտ իմաստութիւնը չունի, թող խնդրէ Աստուծմէ, որ բոլորին կու տայ առատօրէն եւ սիրայօժար կերպով, եւ Աստուած պիտի տայ իրեն: Բայց թող խնդրէ հաւատքով, առանց երկմտելու, որովհետեւ երկմիտ մարդը կը նմանի ծովու ալիքներուն, որոնք հովերէն կը շարժին ու կը տարուբերին: Այնպիսին թող չակնկալէ որ Տէրը կու տայ իր խնդրածը, որովհետեւ երկմիտ մարդը իր բոլոր քայլերուն մէջ անհաստատ է:

Աղքատ եղբայրը թող ուրախ ըլլայ, երբ Աստուած զինք բարձրացնէ: Հարուստ եղողն ալ թող ուրախ ըլլայ, երբ Աստուած զինք խոնարհեցնէ, որովհետեւ հարստութիւնը կը նմանի վաղանցուկ վայրի ծաղիկին: Ինչպէս երբ արելը ծագի՝ իր այրող տաքութեամբ խոտը կը չորցնէ եւ ծաղիկը կը թափի, անոր գեղեցկութիւնն ալ կը կորսուի, ճիշդ այնպէս ալ մեծահարուստը իր գործերով միասին պիտի թառամի:

Երանի՛ այն մարդուն որ կը տոկայ փորձութեան, որովհետեւ փորձութենէն յաղթական դուրս եկողը որպէս մրցանակ պիտի ստանայ այն կեանքը, որ Տէրը խոստացաւ տալ զինք սիրողներուն:

## ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

### ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 22.41-46

Երբ փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. *«Ի՞նչ կը խորհիք Քրիստոսի, խոստացուած Փրկիչին մասին: Որո՞ւն որդին է ան»:* Անոնք պատասխանեցին. *«Դաւիթի»:* Յիսուս ըսաւ անոնց. *«Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ս. Հոգիով ներշնչուած՝ զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ.*

*«Տէրը իմ Տիրոջս ըսաւ.- աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:*

*«Արդ, եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»:* Ոչ ոք կրցաւ պատասխան տալ Յիսուսի. եւ այդ օրուրն սկսեալ ոեւէ մէկը չէր համարձակեր իրեն հարցուն ուղղել:

## 24 ԳՇ.

### ՄՐԲՈՅՆ ԱՏԵՓԱՆՈՍԻ ՆԱԽԱՍԱՐԿԱԿԱԳԻՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ

**ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԷՆ 6.8- -8.2** Ստեփանոս Աստուծոյ շնորհքով եւ զօրութեամբ լեցուն մարդ մըն էր, որ ժողովուրդին մէջ մեծամեծ հրաշքներ եւ նշաններ կը կատարէր ցոյց կու տար: Այդ իսկ պատճառով, Լիպիացիներու, Կիրենացիներու, Աղեքսանդրացիներու, Կիլիկեցիներու եւ Ասիացիներու ժողովարանէն կարգ մը Զրեաներ եկան Ստեփանոսի հետ վիճաբանելու: Սակայն չէին կրնար դէմ դնել անոր իմաստուն եւ Սուրբ Զոգիէն ներշնչուած խօսքերուն: Այն ատեն քանի մը հոգի կաշառեցին, որպէսզի անոնք վկայութիւն տան, ըսելով.- Անձամբ լսեցինք, որ այս մարդը Մովսէսի եւ Աստուծոյ դէմ հայհոյալից խօսքեր կ'ըներ:

Այս ձեւով գրգռեցին ժողովուրդը, երեցները եւ Օրէնքի ուսուցիչները, եւ Ստեփանոսի վրայ յարձակելով՝ զայն բռնեցին Ատեան բերին: Ապա մէջտեղ բերին սուտ վկաները, որոնք կ'ըսէին.- Այս մարդը անդադար հայհոյալից խօսքեր կ'ընէ այս սրբավայրին եւ Աստուծոյ Օրէնքին դէմ: Անձամբ լսեցինք որ կ'ըսէր՝ թէ Նազովրեցի Յիսուսը պիտի քանդէ այս տաճարը եւ պիտի փոխէ այն աւանդութիւնները որ Մովսէս մեզի տուաւ: Ատեանին մէջ նստողները իրենց հայեացքը Ստեփանոսի դարձուցին եւ տեսան անոր դէմքը, որ հրեշտակի դէմքի կը նմանէր:

Քահանայապետը հարցուց Ստեփանոսի.- Իրա՞ւ են ըսուածները: Եւ անիկա պատասխանեց.- Եղբայրներ եւ հայրեր, մտի՛կ ըրէք ինձի: Երբ Աբրահամ, մեր հայրը, տակաւին Միջագետք կ'ապրէր նախքան Խառան բնակիլը, Աստուած, որուն կը պատկանի փառքը, երեւցաւ անոր եւ ըսաւ. «Ե՛լ քու երկրէդ, ձգէ՛ քու ազգականներդ եւ եկուր բնակէ այնտեղ՝ որ ցոյց պիտի տամ քեզի»: Այն ատեն Աբրահամ Քաղդէացիներու երկրէն ելաւ եւ եկաւ Խառան բնակեցաւ. իսկ Աբրահամի հօր մահուընէն ետք, Աստուած զայն հոնկէ ալ հանեց եւ փոխադրեց այս երկիրը, ուր հիմա դուք կը բնակիք: Այս երկրին մէջ թիզ մը հող իսկ ժառանգութիւն չտուաւ Աբրահամի. խակայն այս երկիրը որպէս բնակավայր խոստացաւ տալ իրեն եւ իրմէ ետք իր սերունդին, երբ դեռ Աբրահամ զաւակ չունէր: Աստուած այսպէս ըսաւ.- «Քու սերունդդ պանդուխտ պիտի ըլլայ օտար երկրի մը մէջ. պիտի ստրկացնեն եւ պիտի չարչարանեն զայն, չորս հարիւր տարի: Բայց ես ինքս պիտի դատեմ այն ազգը, որուն ստրուկ պիտի ըլլան անոնք,- կ'ըսէ Աստուած,- որմէ ետք պիտի ելլեն հոնկէ եւ այստեղ պիտի զան զիս ուշտելու համար»: Աստուած թլփատութեան պատուէրը տուաւ Աբրահամին, որպէս ուխտի նշան: Այնուհետեւ Աբրահամ Իսահակը ծնաւ եւ ութերորդ օրը զայն թլփատեց: Իսահակ Յակոբը ծնաւ եւ թլփատեց, եւ Յակոբ՝ տասներկու նահապետները:

Յովսէփի եղբայրները իրեն նախանձելով՝ զայն Եգիպտոս գացող կարաւանին ծախեցին: Սակայն Աստուած անոր հետ էր. զայն փրկեց բոլոր նեղութիւններէն, Եգիպտոսի թագաւորին՝ փառաւոնի աչքին զայն բարձրացուց իր իմաստութեամբ, եւ Եգիպտոսի ու փառաւոնի տան վրայ իշխան կարգեց: Ապա երաշտ եղաւ ամբողջ Եգիպտոսի եւ Քանաանի մէջ. սաստիկ սով տիրեց եւ մեր հայրերը ուտելիք չէին գտներ: Յակոբ երբ լսեց թէ Եգիպտոսի մէջ ուտելիք կարելի է ճարել, հոն դրկեց իր զաւակները. ասիկա մեր հայրերուն առաջին այցելութիւնն էր Եգիպտոս: Երկրորդ անգամին, Յովսէփ ինքզինք յայտնեց իր եղբայրներուն, եւ փառաւոնը ճանչցաւ անոր ազգատոհմը: Յովսէփ մարդ դրկեց եւ բերել տուաւ իր հայրը՝ Յակոբը եւ ամբողջ գերդաստանը, ընդամենը եօթանասուն հինգ հոգի: Յակոբ Եգիպտոս իջաւ եւ հոն ալ վախճանեցաւ, թէ՛ ինք եւ թէ՛ մեր հայրերը, եւ բոլորին ալ մարմինները Սիւքեմ փոխադրուեցան եւ դրուեցան այն քարայրին մէջ, որ Աբրահամ Սիւքեմի մէջ դրամով գնեց Համորի որդիներէն:

Մեր ժողովուրդը աճեցաւ եւ բազմեցաւ Եգիպտոսի մէջ, մինչեւ մօտեցաւ այն ժամանակը, երբ Աստուած Աբրահամին տուած իր խոստումը պիտի կատարէր: Ապա Եգիպտոսի վրայ իշխեց արքայական ուրիշ տուն մը, որ Յովսէփի տան վայելած իրաւունքները չճանչցաւ: Նոր փարաւոնը մեր ազգին դէմ չարացաւ եւ մեր հայրերը չարչարեց՝ անոնց մանուկները գետը նետել տալով, որպէսզի մեռնին: Այդ ժամանակ էր որ ծնաւ Մովսէս, Աստուծոյ աչքին շնորհալի մանուկ մը, որ նախ երեք ամիս իր հօրը տունը մեծցաւ, իսկը երբ գետը նետեցին՝ փարաւոնին աղջիկը զայն գտաւ, որդեգրեց եւ մեծցուց: Մովսէս Եգիպտական ամբողջ իմաստութեամբ կրթուեցաւ եւ ազդեցիկ եղաւ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով: Երբ քառասուն տարիքը բոլորեց, որոշեց իր ազգակից Իսրայէլացիներուն վիճակով հետաքրքրուիլ: Եւ տեսնելով որ անոնցմէ մին կ'անհրաւուի, զայրացաւ եւ անհրաւուածին վրէժը առաւ՝ սպաննելով Եգիպտացին: Կը խորհէր թէ իր ազգակիցները ասիկա իմանալով՝ պիտի հասկնան, թէ իր ձեռքով Աստուած պիտի փրկէ զիրենք. բայց անոնք չհասկցան: Յաջորդ օրը հանդիպեցաւ երկու ազգակիցներու, որոնք կը կռուէին, եւ փորձեց զանոնք հաշտեցընել, ըսելով. *«Ո՛վ մարդիկ, իրարու եղբայրներ էք, ինչո՞ւ զհրար կ'անհրաւէք»*: Իսկ ան որ իր ընկերը կ'անհրաւէր՝ մէկ կողմ հրեց զինք, պատասխանելով. *«Ո՞վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց: Զի՞ս ալ սպաննել կ'ուզես, ինչպէս երէկ սպաննեցիր Եգիպտացին»*: Այս պատասխանին վրայ Մովսէս փախաւ եւ որպէս պանդուխտ ապրեցաւ Մադիամ կոչուած երկրին մէջ, ուր երկու մանչ զաւակ ունեցաւ:

Քառասուն տարիներ ետք, ահա Տիրոջ հրեշտակը իրեն երեւցաւ անապատին մէջ, Սինա լեռան մօտիկը, բոցավառ մորենիի մը մէջէն: Մովսէս նախ զարմացաւ իր տեսածին վրայ. ապա երբ մօտեցաւ անկի

լաւ տեսնելու համար, Տիրոջ ձայնը ըսաւ. «*Ես քու հայրերուդ Աստուածն եմ. Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը*»: Մովսէս զարհուրած՝ չէր համարձակեր նայիլ: Տէրը անոր հրամայեց. «*Կօշիկներդ ոտքերդ հանէ՛, որովհետեւ այն հողը՝ որուն վրայ կը կանգնիս՝ սուրբ է: Տեսայ Եգիպտոսի մէջ իմ ժողովուրդիս չարչարանքները, լսեցի անոնց հեծութեան ձայնը եւ ահա իջայ որ փրկեմ զանոնք: Արդ, եկո՛ւր, քեզ Եգիպտոս պիտի դրկեն՝*»:

Այսպէս, այն Մովսէսը որ մերժեցին, ըսելով՝ «*Ո՞վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց*», Աստուած զայն որպէս իշխան եւ փրկիչ դրկեց այն հրեշտակին միջոցաւ, որ Մովսէսի երեւցաւ մորենիին մէջէն: Մովսէս Եգիպտոսէն հանեց մեր ժողովուրդը, նշաններ եւ հրաշքներ կատարելով թէ՛ Եգիպտոսի մէջ, թէ՛ Կարմիր Ծովէն անցքին եւ թէ՛ անապատին մէջ քառասուն տարիներու ընթացքին: Նոյն Մովսէսն էր որ Իսրայէլացիներուն ըսաւ. «*Ձեր մէջէն Աստուած ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ, անոր մտիկ ըրէք*»: Մովսէսն էր որ անապատին մէջ հաւաքուած մեր ժողովուրդին համար միջնորդութիւն կ'ըներ մեր հայրերուն եւ հրեշտակին միջեւ, որ Սինա լեռան վրայ անոր հետ խօսեցաւ: Ան էր որ Աստուծոյ կենսատու պատգամները տուաւ մեզի: Սակայն մեր հայրերը չուզեցին Մովսէսի հնազանդիլ, այլ՝ անտեսեցին զինք եւ սկսան Եգիպտոսը փնտռել: Ահարոնին ըսին. «*Մեզի աստուածներ շինէ, որպէսզի մեզ առաջնորդեն. որովհետեւ չենք գիտեր թէ ինչ եղաւ այդ Մովսէսը, որ մեզ Եգիպտոսէն հանեց*»: Նոյն այդ օրերուն հորթի կերպարանքով կուռք մը շինեցին, անոր զոհ մատուցանեցին եւ իրենց ձեռքով շինուած այդ կուռքով կ'ուրախանային: Աստուած ալ երես դարձուց իրենցմէ եւ ձգեց որ երկնային մարմինները պաշտեն: Այդ է պատճառը, որ մարգարէական գիրքը կ'ըսէ. «*Ո՞վ Իսրայէլացիներ, միթէ անապատին մէջ քառասուն տարի ձեր զոհերն ու նուէրները ինծի՞ մատուցանեցիք: Սողոթի վրանը եւ Ռեմֆանի՝ աստղ-աստուծոյն պատկերները շինեցիք եւ անոնց երկրպագութիւն ըրիք: Այդ իսկ պատճառով ձեզ Բաբելոնէն ալ անդին պիտի աքսորեն՝*»:

Գալով Վկայութեան Խորանին, մեր հայրերը զայն անապատին մէջ շինեցին այնպէս՝ ինչպէս Մովսէսի հետ խօսող հրեշտակը պատուիրեց, եւ այն օրինակով՝ որ Մովսէսի ցոյց տրուեցաւ: Մեր հայրերը իրենց կարգին զայն ստացան իրենց հայրերէն եւ Յեսուի օրով իրենց հետ բերին այս երկիրը, որ գրաւեցին այն ազգերէն՝ որոնք Աստուծոյ օգնութեամբ դուրս քշուեցան մեր հայրերուն առջեւէն: Այսպէս, Վկայութեան Խորանը հասաւ մինչեւ Դաւիթի օրերը: Դաւիթ Աստուծոյ հաճութիւնը շահեցաւ եւ ուզեց յարմար վայր մը գտնել՝ Յակոբի Աստուծոյն տուն մը կանգնելու, եւ Սողոմոն այս տաճարը շինեց Աստուծոյ համար: Սակայն բարձրեալն Աստուած ձեռագործ տաճարներու մէջ չէ որ կը բնակի, ինչ որ մարգարէն

ալ կ'ըստ. «Երկինքն է իմ աթոռս, իսկ երկիրը՝ ոտքերուս պատուանդանը: Ի՞նչպիսի տուն պիտի շինեք ինձի համար,- կ'ըստ Տէրը,- կամ ո՞ւր պիտի ըլլայ իմ հանգստավայրս. Չէ՞ որ այս բոլորը իմ ստեղծածներս են»:

Ի՞նչքան յամառ էք դուք, որ բնաւ չէք զղջար եւ Աստուծոյ կանչը չէք լսեր, եւ այսպէս միշտ Սուրբ Հոգիին կը հակառակիք, ինչպէս ձեր հայրերը կ'ընէին անցեալին: Եղա՞ւ մարգարէ մը որ ձեր հայրերը չհաւածեցին: Անոնք սպաննեցին բոլոր այն մարգարէները, որոնք կանուխէն պատմեցին Արդարին գալուն մասին. այն Արդարին, որ դուք ձեր ձեռքով մահուան դատապարտեցիք եւ սպաննեցիք: Կը պարծենաք որ հրեշտակներու ձեռքով ստացաք Օրէնքը, եւ սակայն բնաւ չկատարեցիք զայն:

Այս խօսքերը լսելով, ներկաները ներքնապէս զայրացան եւ սկսան իրենց ակռաները կրճտել անոր դէմ: Մինչ Ստեփանոս, Սուրբ Հոգիով լեցուած, աչքերը երկինք բարձրացուց եւ տեսաւ զԱստուած իր ամբողջ փառքով, ինչպէս նաեւ Յիսուսը՝ Աստուծոյ աջին կանգնած, եւ ըսաւ.- Ահա բացուած է երկինքը, եւ կը տեսնեն Մարդու Որդին որ Աստուծոյ աջին կանգնած է: Ատեան գտնուողները մեծ աղաղակ բարձրացուցին, գոցեցին իրենց ականջները եւ բոլորը միասին անոր վրայ յարձակեցան: Յետոյ զայն քաղաքէն դուրս հանելով՝ սկսան քարկոծել: Վկաները իրենց թիկնոցները կը յանձնէին երիտասարդի մը, որ Սօղոս կը կոչուէր: Մինչ անոնք կը քարկոծէին, Ստեփանոս այսպէս կ'աղօթէր. – Տէ՛ր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս:

Յետոյ ծունկի եկաւ եւ բարձրաձայն աղաղակեց.- Տէ՛ր, ներէ իրենց այս մեղքը: Եւ հազիւ ըսած՝ մահուամբ աչքերը փակեց:

Ստեփանոսի քարկոծուը պահանջողներէն մէկն ալ Սօղոսն էր:

Նոյն օրը Երուսաղէմի եկեղեցւոյ դէմ մեծ հալածանք սկսաւ, որուն հետեւանքով՝ բացի առաքեալներէն բոլոր միւսները ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիայի գիւղերը: Իսկ քանի մը բարեպաշտներ Ստեփանոսի մարմինը տարին թաղեցին, մեծ կոծ ընելով անոր վրայ:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 12.24-26** Վստահ գիտցէք, որ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ եւ չմեռնի, ինք որպէս առանձին հատիկ կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ բազմաթիւ հատիկներ կու տայ: Ով որ իր անձը կը սիրէ՝ կը կորսնցնէ զայն, իսկ ով որ իր անձը կ'անտեսէ այս աշխարհի վրայ՝ զայն յաւիտենական կեանքին համար պահած կ'ըլլայ: Ով որ ուզի ինձի ծառայել՝ պէտք է ինձի հետեւի, եւ ինձի ծառայողը պիտի ըլլայ հոն՝ ուր ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ ինձի ծառայողը:

## 25 ԴՇ. ՊԱՅՔ

### ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 5.11- -6.8

Այդ մասին մենք շատ ըսելիք ունինք, բայց կը դժուարանանք զանոնք բառերով բացատրելու, որովհետեւ ձեր ականջները ու միտքերը բթացեր են: Արդարեւ, դուք պէտք էր ուրիշներուն ուսուցանէիք մինչեւ հիմա, մինդեռ դուք կրկին պէտք ունիք Աստուծոյ պատգամներուն ամենատարրական դասերը սորվելու: Այլ խօսքով, կարծր կերակուրի տեղ՝ տակաւին կաթի կը կարօտիք: Որովհետեւ ով որ կաթնկեր է՝ կը նշանակէ թէ մանուկ է, եւ անձնական փորձով չի գիտեր շիտակը սխալէն զանազանել: Մինչդեռ կարծր կերակուրը չափահասներուն համար է, որոնք վարժութեան ճամբով կրթած են չարն ու բարին զանազանելու իրենց զգայարանքը:

Ուստի, քրիստոնէական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ զանք չափահասներու յատուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ մեռելական գործերէ ապաշխարելուն եւ Աստուծոյ հաւատալուն, քրիստոնէական դաստիարակութեամբ մկրտուելուն, ձեռնադրութեան, մեռելներու յարութեան եւ յաւիտենական դատաստանին: Այլ, Աստուծոյ թոյլտուութեամբ, կ'անցնինք չափահասներու յատուկ ուսուցումներուն:

Արդ, անոնք՝ որ անգամ մը լուսաւորուելով մկրտուելէ, երկնային պարգեւները վայելելէ, Սուրբ Հոգիին հաղորդակից դառնալէ, Աստուծոյ բարի խօսքը ճաշակելէ եւ հանդերձեալ աշխարհի սքանչելիքներուն նախաճաշակը առնելէ ետք՝ իրենց հաւատքը կը լքեն, այդպիսիները կարելի չէ երկրորդ անգամ ապաշխարութեան բերել: Անկարելի է ատիկա, որովհետեւ այդ ձեւով իրենք իրենց համար վերստին խաչը կը հանեն Աստուծոյ Որդին, զայն հրապարակաւ խայտառակ ընելով:

Արդարեւ, այն հողը որ իր վրայ տեղացած անձրեւները կ'ըմպէ եւ օգտակար բերք կու տայ ինք մշակողներուն՝ Աստուծմէ օրհնութիւն կը ստանայ: Իսկ այն հողը որ փուշ եւ տատասկ կը բուսցնէ՝ անպէտ է եւ անէծքի ենթակայ, եւ սահմանուած է այրուելու:

### ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 18.18-27

Հրեայ իշխանաւոր մը Յիսուսի հարցուց.- Բարի Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ յաւիտենական կեանքը ժառանգելու համար:

Յիսուս ըսաւ անոր.- Ի՞նչու զիս բարի կը կոչես. միայն Աստուած բարի է: Պատուիրանները գիտես. «Մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ տար, պատուէ՛ հայրդ ու մայրդ»:

Անիկա ըսաւ.- Այդ բոլորը պատանութենէս ի վեր պահած են:

Յիսուս երբ ասիկա լսեց, ըսաւ իշխանաւորին.- Մէկ բան տակաւին պէտք է ընես: Ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ ապա եկուր հետեւէ ինձի:

Իշխանաւորը երբ ասիկա լսեց, տրտմեցաւ, որովհետեւ շատ հարուստ էր: Յիսուս զայն տրտուն տեսնելով, ըսաւ.- Որքա՛ն դժուար է հարստութիւն ունեցողներուն համար՝ Աստուծոյ արքայութիւնը մտնել: Շատ աւելի դիւրին է որ պարանը ասեղի ծակէն մտնէ, քան հարուստը՝ Աստուծոյ արքայութիւնը:

Անոնք որ լսեցին, ըսին.- Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ:

Յիսուս պատասխանեց.- Ինչ որ անկարելի մարդոց համար՝ կարելի է Աստուծոյ համար:

**ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ՝ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ**

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ**

**ՆԱՄԱԿԸ ՏԻՍՈՒԹԵՆՈՒՆ 4.1-8** Ուստի, հետեւեալ պատուէրը կու տամ քեզի՝ Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի ներկայութեան, որ ողջերն ու մեռածները պիտի դատէ իր յայտնութեան օրը, երբ իր թագաւորութեամբը գայ.- Աստուծոյ խօսքը քարոզէ եւ գայն յայտարարէ ամէն առիթով, առանց պատեհութիւնը կամ անպատեհութիւնը խորհելու, սխալները ուղղէ, եւ սաստէ կամ յորդորէ՝ մեծ համբերատարութեամբ ուսուցանելով: Որովհետեւ ժամանակ պիտի գայ, երբ մարդիկ ականջ պիտի չկախեն առողջ վարդապետութեան, այլ՝ իրենց սեփական ցանկութիւններուն համապատասխանող եւ զիրենք հճոյացնող բաներու մասին խօսող ուսուցիչներ պիտի փնտռեն: Պիտի չուզեն ճշմարտութիւնը լսել, եւ առասպելներու ականջ տալով պիտի կորսուին: Բայց դուն միշտ արթուն եղիր, ներդութիւններու համբերէ, անետարանիչի քու գործդ ըրէ եւ ծառայութիւնդ իր աւարտին հասցուր:

Որովհետեւ ես արդէն իսկ կեանքս իբրեւ զոհ Աստուծոյ նուիրած եմ եւ այս աշխարհէն մեկնումիս ժամանակն ալ մօտեցած է: Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինձի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը, արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինձի պիտի տայ դատաստանի օրը: Եւ պիտի տայ ո՛չ միայն ինձի, այլ նաեւ բոլոր անոնց՝ որոնք սիրով կը սպասեն Տիրոջ յայտնուելուն:

**ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ 1.12-19**

Ահա թէ ինչու, միշտ ձեզի պիտի յիշեցնեմ այս բաները, թեպէտեւ դուք գիտէք եւ հաստատուն կը մնաք ձեր ստացած ճշմարտութեան վրայ: Եւ կը կարծեմ թէ շիտակ կ'ընեն ասոնք ձեզի յիշեցնելով, որքան ատեն որ դեռ աշխարհի մէջ եմ, քանի գիտեմ որ շուտով այս աշխարհէն պիտի հեռանամ, ինչպէս մեր Տէրը Յիսուս Քրիստոս յայտնեց ինձի: Ուստի կը ջանամ ձեզ յորդորել, որ այս աշխարհէն մեկնելէս ետքն ալ միշտ այս բաները յիշէք:

Որովհետեւ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի զօրութեան եւ անոր երկրորդ գալստեան մասին խօսեցանք ձեզի, շինծու առասպել մը չէր որ ներկայացուցինք, քանի որ անձամբ ականատես եղանք անոր մեծութեան, երբ անիկա փառք եւ պատիւ ստացաւ Զօր Աստուծոմէ, որ իր



մեծավայելուչ եւ փառաւոր ձայնով անոր համար վկայեց, ըսելով.  
«Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ»: Մենք անձամբ լսեցինք  
երկինքէն եկող այդ ձայնը, որովհետեւ Յիսուսի հետ միասին էինք սուրբ  
լերան վրայ:

Ահա թէ ինչու՝ հիմա աւելի ամբօրէն կապուած ենք մարգարեական  
վկայութիւններուն. եւ լաւ կ'ըլլայ որ դուք ալ ձեր ուշադրութիւնը դարձնէք  
անոնց, որովհետեւ անոնք այն ճրագն են՝ որ մութ տեղը լոյս կու տայ,  
մինչեւ բացուի այն օրուան արշալոյսը եւ Առաւօտեան Աստղը ծագի ձեր  
սիրտերուն մէջ:

### **ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 21.15-22** Ուտելէ ետք, Յիսուս ըսաւ Սիմոն Պետրոսի.-

Սիմոն, Յովնանի որդի, կը սիրե՞ս զիս ասոնցմէ աւելի:

Այո, Տէր,- պատասխանեց ան,- դուն գիտես որ կը սիրեմ քեզ:

Արածէ իմ գառնուկներս,- ըսաւ Յիսուս անոր:

Եւ դարձեալ հարցուց.- Սիմոն, Յովնանի որդի, կը սիրե՞ս զիս:

Այո, Տէր,- պատասխանեց ան,- դուն գիտես որ կը սիրեմ քեզ:

Արածէ իմ ոչխարներս,- ըսաւ Յիսուս անոր: Եւ երրորդ անգամ հարցուց.-

Սիմոն, Յովնանի որդի, կը սիրե՞ս զիս:

Պետրոս տրտմեցաւ որ երեք անգամ հարցուց իրեն՝ «կը սիրե՞ս զիս», եւ  
ըսաւ անոր.- Տէր, դուն ամէն ինչ գիտես, եւ գիտես թէ կը սիրեմ քեզ:

Յիսուս ըսաւ անոր.- Արածէ իմ ոչխարներս:

Եւ աւելցուց.- Լաւ գիտցիր, որ երբ երիտասարդ էիր՝ քու ձեռքովդ կը  
կապէիր գօտիդ եւ կ'երթայիր ուր որ կ'ուզէիր: Բայց երբ ծերանաս, ձեռքդ  
վեր պիտի բարձրացնես եւ ուրիշներ պիտի կապեն գօտիդ ու տանին հոն՝  
ուր դուն չես ուզեր երթալ:

Յիսուս ասիկա ըսաւ՝ ցոյց տալու համար, թէ ինչպիսի մահով Պետրոս  
պիտի փառաւորէ զԱստուած: Յետոյ Յիսուս ըսաւ անոր.- Չետեւէ ինձի:

Պետրոս ետեւ դարձաւ եւ տեսաւ որ իրեն կը հետեւէր այն աշակերտը,  
զոր Յիսուս կը սիրէր, ան՝ որ ընթրիքի ատեն Յիսուսի կողմը դառնալով  
հարցուցած էր՝ «Տէր, ո՞վ է քեզ մատնողը»: Պետրոս զայն տեսնելով՝  
հարցուց Յիսուսի.- Տէր, իսկ ասիկա՞ ինչ պիտի ըլլայ:

Յիսուս պատասխանեց.- Եթէ ես կ'ուզեմ որ ասիկա ապրի՝ մինչեւ ես գամ,  
քու ի՞նչ հոգդ է. դուն հետեւէ ինձի:

## 27 ՈՒՐ. ՊԱՅՔ

### ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 6.9- -7.10

Սակայն, այս բաները ըսելով հանդերձ, ես վստահ եմ որ դուք, սիրելիներ, լաւագոյն ճամբուն մէջ էք, որ փրկութեան կ'առաջնորդէ: Աստուած անարդար չէ. չի մոռնար ձեր գործերը եւ այն սէրը՝ որ իր անունով ցուցաբերեցիք՝ ձեր քրիստոնէայ եղբայրներուն օգտակար ըլլալով, ինչպէս կը շարունակէք մինչեւ հիմա: Եւ մենք կը փափաքինք որ ձեզմէ իւրաքանչիւրը մինչեւ վերջ շարունակէ նոյն փութաջանութիւնը ցուցաբերել, որպէսզի ձեր յոյսը միշտ հաստատուն մնայ: Չենք ուզեր որ թուլնաք. այլ նմանեցէք անոնց՝ որոնք հաւատքով եւ համբերութեամբ կը փորձեն Աստուծոյ խոստումը ժառանգել:

Երբ Աստուած այդ խոստումը կ'ընէր Աբրահամին, քանի որ չկար իրմէ գերիվեր մէկը՝ որպէսզի անոր վրայ երդում ընէր՝ ինքն իր անձին վրայ երդում ըրաւ, ըսելով. *«Ճշմարիտ որ մեծապէս պիտի օրհնեմ քեզ եւ անսահմանօրէն պիտի բազմացնեմ քու սերունդներդ»*: Եւ Աբրահամ համբերութեամբ սպասեց, եւ այդպէս ալ ստացաւ Աստուծոյ խոստացածը: Մարդիկ իրենցմէ վեր բաներու վրայ երդում կ'ընեն, եւ երդումը կը գործածեն իբրեւ ապահովութիւն տալու կերպ՝ իրենց վէճերուն վերջ դնելու համար: Ատոր համար, Աստուած ինք ալ երդումը օգտագործեց՝ իր խոստումին ժառանգորդներուն յստակօրէն ցոյց տալու համար իր որոշումին անփոփոխելի ըլլալը: Աստուած այս երկու բաները, խոստումն ու երդումը, որոնք անփոփոխելի են եւ որոնց կապակցութեամբ անկարելի է որ ստէ, տուաւ՝ որպէսզի մենք որ իրեն ապաւինեցանք՝ մեծապէս քաջալերուինք եւ մեզի տրուած յոյսին կառչինք: Այդ յոյսը մեր խարիսխն է, ապահով եւ անշարժ, որ կը մտնէ երկնաւոր տաճարի վարագոյրէն ներս, ներքին Սրբարանը, ուր Յիսուս մտաւ մեզմէ առաջ եւ մեզի համար, եւ յաւիտենական Քահանայապետ եղաւ, Մելքիսեդեկին պէս:

Այս *«Մելքիսեդեկը Սաղէմի թագաւորն էր եւ բարձրեալ Աստուծոյ քահանան, որ Աբրահամը դիմաւորելու ելաւ, երբ անիկա պատերազմէն կը վերադառնար, թագաւորները պարտութեան մատնելէ ետք. եւ Մելքիսեդեկ օրհնեց Աբրահամը: Իսկ Աբրահամ իր ամբողջ աւարին մէկ տասներորդը անոր տուաւ»*: Նախ, Մելքիսեդեկ անունը կը նշանակէ՝ արդարութեան թագաւոր: Երկրորդ, Թագաւոր Սաղէմի՝ կը նշանակէ թագաւոր խաղաղութեան: Մելքիսեդեկի ո՛չ հայրը յայտնի է, ո՛չ մայրը եւ ո՛չ ալ ծագումը. իր կեանքին ո՛չ սկիզբը գիտենք եւ ո՛չ ալ վախճանը: Նման է Աստուծոյ Որդիին. մշտնջենական քահանայ է:

Արդ, տեսէք թէ ինչպիսի մեծ մէկն էր Մելքիսեդեկը, որուն Աբրահամ

նահապետ պատերազմական ավարեն տասանորդ տուաւ: Գիտենք, թէ Ղեւիի որդիներէն անոնք որ քահանայական պաշտօնը կ'առնեն՝ հրահանգ ունին Օրէնքին համաձայն տասանորդ առնելու ժողովուրդէն, այսինքն իրենց ազգակիցներէն, թէպէտեւ ասոնք ալ Աբրահամի զաւակներն են: Մելքիսեդէկ Ղեւիի սերունդէն չըլլալով հանդերձ՝ տասանորդ առաւ եւ օրհնեց Աբրահամը, որ Աստուծոյ խոստումները ստացած էր: Եւ կասկած չկայ որ օրհնողը շատ ավելի բարձր է քան օրհնուողը:

Տակաւին, Ղեւտացի քահանաները, որոնք տասանորդ կ'առնեն, մահկանացու մարդիկ են. մինչդեռ Մելքիսեդէկի համար կը վկայուի՝ թէ միշտ կենդանի է: Եւ, ինչպէս կարելի է ըսել, Աբրահամի միջոցաւ՝ Ղեւի եւս, որուն զաւակները տասանորդ կ'առնեն, տասանորդ տուած եղաւ Մելքիսեդէկի, որովհետեւ տակաւին իր նախահօրը սերմին մէջ էր, երբ Մելքիսեդէկ Աբրահամը դիմաւորելու ելաւ:

### **ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 19.1-10**

Յիսուս Երիքով մտաւ եւ կ'անցնէր քաղաքէն: Չակքէնս անունով մարդ մը, որ մաքսապետ էր եւ հարուստ, կ'ուզէր տեսնել թէ ով է Յիսուսը, բայց ամբոխին պատճառով չէր յաջողեր՝ քանի կարճահասակ էր: Ուստի առաջ վազեց եւ ժանտաթզենիի մը վրայ ելաւ, որպէսզի տեսնէ, որովհետեւ Յիսուս այդտեղէն պիտի անցնէր: Յիսուս երբ հասաւ այդտեղը, վեր նայեցաւ եւ ըսաւ.- Չակքէնս, աճապարէ, վար իջիր, որովհետեւ այսօր պէտք է տունդ գիշերեն:

Չակքէնս աճապարելով վար իջաւ եւ ուրախութեամբ ընդունեց Յիսուսը: Բոլոր անոնք որոնք տեսան ասիկա, սկսան մրթմրթալ եւ ըսել.- Այս մարդը մեղաւորի մը տունը գնաց հիւր եղաւ:

Չակքէնս ոտքի ելաւ եւ Տիրոջ ըսաւ.- Տէր, ահա ունեցածիս կեսը աղքատներուն պիտի տամ եւ եթէ ոեւէ մէկը անհրաւած են՝ քառապատիկ պիտի հատուցանեմ անոր:

Յիսուս ըսաւ անոր.- Այսօր այս տունը փրկուեցաւ, քանի այս մարդն ալ Աբրահամի զաւակ է: որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փնտռելու եւ փրկելու:

## 28 ՇԲ.

### **ՍՐԲՈՑ ՈՐԴԻՑՆ ՈՐՈՏՄԱՆ՝ ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ ՅՈԿՅԱՆՆՈՒ ԱԻՏԱՐԱՆՉԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԷՆ 12.1-11**

Այն օրերուն Յերովդէս թագաւոր սկսաւ հալածանք հանել եկեղեցւոյ անդամներէն ոմանց դէմ: Նախ սուրով սպաննել տուաւ Յակոբոսը, Յովհաննէսի եղբայրը: Ապա տեսնելով որ ատիկա Յրեաներուն հաճելի է, Պետրոսն ալ ձերբակալել տուաւ Բաղարջակերաց տօնի օրերուն: Չայն բռնելէ ետք բանտ դնել տուաւ, չորս հերթով չորսական զինուորներու յանձնելով անոր պահպանութիւնը: Կ'ուզէր Չատիկէն ետք հրապարակաւ դատել զայն:

Մինչ Պետրոս բանտարկուած կը մնար, եկեղեցին անդադար Աստուծոյ կ'աղօթէր իրեն համար:

Հասաւ ժամանակը, երբ Յերովդէս կ'ուզէր զայն դատաստանի բերել: Գիշեր մը առաջ, Պետրոս երկու զինուորներու մէջտեղը կը քնանար, երկու շղթաներով կապուած, իսկ պահակները դրան առջեւ բանտը կը պահպանէին: Եւ ահա Տիրոջ հրեշտակը եկաւ կեցաւ իր քով: Բանտին խցիկը լուսաւորուեցաւ: Պետրոսի կողը խթելով՝ հրեշտակը զայն արթնցուց եւ ըսաւ.- շուտով ե՛լ:

Շղթաները ինկան Պետրոսի ձեռքերէն: Հրեշտակը ըսաւ իրեն.- Գօտիդ կապէ եւ հողաթափներդ հագիր:

Պետրոս անոր ըսածը կատարեց: Եւ անիկա ըսաւ.- Վերարկուդ վրադ առ եւ ինձի հետեւէ:

Պետրոս ելաւ եւ անոր հետեւեցաւ. սակայն չէր գիտեր՝ հրեշտակին ըրածը իրակա՞ն է թէ ոչ, որովհետեւ կը կարծէր թէ երազ կը տեսնէ: Առաջին պահակակետը անցան, յետոյ անցան երկրորդը եւ եկան երկաթ դարպասին քով, որ դէպի քաղաք կը տանէր: Դարպասը ինքնիրեն բացուեցաւ իրենց առջեւ: Դուրս գալով, անոնք փողոց մտան. եւ իսկոյն հրեշտակը հեռացաւ իրմէ: Պետրոս ինքզինքին գալով, ըսաւ.- Ալ հիմա վստահ եմ, թէ Տէրը իր հրեշտակը ղրկեց եւ զիս ազատեց Յերովդէսի ձեռքէն եւ այն բոլորէն, որ հրեայ ժողովուրդը կ'ակնկալէր:

### **ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՎԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ 1.2-10**

Եղբայրներ, դուք ձեզ շատ երջանիկ համարեցէք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ կ'իյնաք: Գիտցէք, որ փորձութիւնը համբերութիւն կը ծնի, եթէ ձեր հաւատքը փորձին դիմանայ: Իսկ համբերութիւն պէտք է ունենալ մինչեւ վերջ, որպէսզի ամբողջական եւ կատարեալ ըլլաք, եւ ձեզի ունէ բան չպակսի:

Եթէ ձեզմէ մէկը կը զգայ թէ անհրաժեշտ իմաստութիւնը չունի, թող խնդրէ

Աստուծո՛ւմ, որ բոլորին կու տայ առատօրէն եւ սիրայօժար կերպով, եւ Աստուած պիտի տայ իրեն: Բայց թող խնդրէ հաւատքով, առանց երկմտելու, որովհետեւ երկմիտ մարդը կը նմանի ծովու ալիքներուն, որոնք հովերէն կը շարժին ու կը տարուբերին: Այնպիսին թող չակնկալէ որ Տէրը կու տայ իր խնդրածը, որովհետեւ երկմիտ մարդը իր բոլոր քայլերուն մէջ անհաստատ է:

Աղքատ եղբայրը թող ուրախ ըլլայ, երբ Աստուած զինք բարձրացնէ: Հարուստ եղողն ալ թող ուրախ ըլլայ, երբ Աստուած զինք խոնարհեցնէ, որովհետեւ հարստութիւնը կը նմանի վաղանցուկ վայրի ծաղիկին:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԵՆ 1.1-7** Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն է: Անիկա նոյնինքն կեանքն էր որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է. բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ՝ եթէ ըսենք *«հաղորդակից ենք իրեն»* եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ լոյսին մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 21.20-25** Պետրոս ետեւ դարձաւ եւ տեսաւ որ իրեն կը հետեւէր այն աշակերտը, զոր Յիսուս կը սիրէր, ան՝ որ ընթրիքի ատեն Յիսուսի կողմը դառնալով հարցուցած էր՝ *«Տէր, ո՞վ է քեզ մատնողը»*: Պետրոս զայն տեսնելով՝ հարցուց Յիսուսի.- Տէր, իսկ ասիկա՞ ինչ պիտի ըլլայ:

Յիսուս պատասխանեց.- Եթէ ես կ'ուզեմ որ ասիկա ապրի՝ մինչեւ ես գամ, քու ի՞նչ հոգո՞ւ է. դուն հետեւէ ինձի:

Այս խօսքէն Յիսուսի հետեւորդներուն մէջ այն կարծիքը տարածուեցաւ՝ թէ այդ աշակերտը պիտի չմեռնի: Բայց Յիսուս չըսաւ թէ *«Պիտի չմեռնի»*, այլ՝ *«Եթէ ես կ'ուզեմ որ ասիկա ապրի մինչեւ ես գամ, քուն ի՞նչ հոգո՞ւ է»*:

Ասիկա նոյն այն աշակերտն է, որ կը վկայէ այս բաներուն մասին եւ որ գրի առաւ ասոնք. եւ գիտենք թէ անոր վկայութիւնը վաւերական է: Բայց տակաւին Յիսուս շատ բաներ ալ կատարեց, որոնք եթէ մէկ առ մէկ գրուէին՝ կը կարծենք թէ ամբողջ աշխարհն ալ բաւական պիտի չըլլար պարփակելու գրուած այդ գիրքերը:

**2. ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՅՈՑ**

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԵՆ 41.4-14** Այսպէս կ'ըսէ Տէրը.- Ո՞վ ըրաւ, ո՞վ իրականացուց այս բոլորը, ո՞վ որոշեց պատմութեան ընթացքը, եթէ ոչ ես՝ Տէրս, որ անոր սկիզբը դրի եւ զայն կը ղեկավարեմ մինչեւ գալիք յաւիտեանը:

Հեթանոսները զիս տեսան եւ վախցան, հեռաւոր ազգեր իրենց սարսափէն մօտեցան, իրարու քով եկան:

Արիեստաւորներ որպէս ընկեր ու եղբայր զիրար քաջալերեցին, հիւսնը ոսկերիչին օգնեց, ձուլագործը՝ դարբինին: Իրարու ըսին. «Լաւ եղաւ այս օգնութիւնը», եւ կուռքերը իրենց տեղը գամեցին, ամրացուցին այնպէս՝ որ չշարժին:

Բայց դուն, Իսրայէլ, դուն իմ ծառաս ես, ո՞վ Յակոբ, ե՛ս քեզ ընտրեցի, ո՞վ սերունդ Աբրահամի՝ զոր սիրեցի. քեզ աշխարհի չորս ծագերէն բերի, աշխարհի հեռաւոր անկիւններէն քեզ կանչեցի, ըսելով. «Իմ ծառաս ես դուն». չլքեցի քեզ, որովհետեւ իմ ընտրածս ես դուն:

Հետեւաբար մի՛ վախնար, ես հետդ եմ. մի՛ շփոթիր, քու Տէր Աստուածդ եմ ես. պիտի զօրացնեմ քեզ, պիտի օգնեմ քեզի եւ իմ աջովս պիտի պահպանեմ եւ արդարացնեմ քեզ:

Ահա քու բոլոր հակառակորդներդ պիտի անչնան ու գլուխնին կախեն, իսկ քեզ անբաստանողները պիտի կորսուին ու չքանան:

Պիտի փնտռես բայց պիտի չգտնես անոնք՝ որ քեզի թշնամութիւն ըրին, պիտի լքուին, գոյութենէ պիտի դադրին քեզի դէմ պատերազմողները:

Որովհետեւ ես՝ քու Տէր Աստուածդ, քու ձեռքդ բռնած եմ եւ քեզի կ'ըսեմ. «Մի՛ վախնար, պիտի օգնեմ քեզի»:

Մի՛ վախնար, ո՞վ Յակոբի մնացորդ, փոքրաթիւ Իսրայէլ, ահա ես կ'օգնեմ քեզի,- կ'ըսէ Իսրայէլի Սուրբ Աստուածը, որ քեզ պիտի փրկէ:

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 7.11-25** Գիտենք թէ ղեւտացիներու քահանայութիւնն էր հիմը սրբութեան այն օրէնքին որ Իսրայէլի ժողովուրդին տրուեցաւ:

Արդ, եթէ կարելի ըլլար այդ քահանայութեան միջոցաւ կատարելութեան հասնիլ, Աստուած ի՞նչ պէտք պիտի ունենար նոր քահանայապետ մը տալու Մելքիսեդեկի օրինակով եւ ո՛չ Ահարոնի քահանայութեան շարունակութենէն: Միւս կողմէ, քահանայութեան փոխուելուն հետ սրբութեան օրէնքն ալ պէտք էր փոխուէր. որովհետեւ Քրիստոս, որուն մասին կը խօսուի, կը պատկանէր ուրիշ ցեղի մը, որուն անդամներէն ո՛չ ոք քահանայութեան պաշտօնը ստանձնեց երբեւիցէ: Արդ, յայտնի է թէ մեր Տէրը Յուդայի ցեղէն էր, մինչդեռ այդ ցեղէն գալիք քահանայութեան

մը մասին Մովսէս ունէ բան չըսաւ:

Փոփոխութիւնը աւելի բացորոշ է անով՝ որ կը յայտնուի քահանայ մը որ Մելքիսեդեկի նման է. այսինքն՝ մարմնաւոր կեանքի յատուկ օրէնքներու եւ կարգերու համաձայն չէ՝ որ քահանայ եղած է, այլ՝ յաւիտենական կեանքի մէջ ի զօրու եղող օրէնքով: Անոր մասին վկայեց սաղմոսագիրը, ըսելով. *«Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկին պէս»*: Բացայայտ է, թէ նախկին պատուիրանը մէկդի կը դրուի, անզօր եւ անօգուտ ըլլալուն համար, որովհետեւ Օրէնքը չկրցաւ ունէ բան կատարելութեան հասցնել. եւ հիմա աւելի լաւ յոյս մը տրուեցաւ մեզի, որով Աստուծոյ կը մօտենանք: Աւելին, այս նոր քահանայութիւնը երդունով տրուեցաւ, մինչդեռ միւսներուն քահանայութիւնը երդունով տրուած չէ: Քրիստոս քահանայ եղաւ Աստուծոյ երդունով, ինչպէս սաղմոսագիրը կ'ըսէ.

*«Տէրը անդառնալի երդում ըրաւ, ըսելով.- Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկին պէս»:*

Եւ այսպէս, Յիսուս գերազանց ուխտի մը երաշխաւորը եղաւ: Ի վերջոյ, միւս քահանաները թիւով շատ կ'ըլլային, որպէսզի մէկուն կամ միւսին մահով քահանայութիւնը չընդհատուէր: Բայց որովհետեւ Յիսուս յաւիտեան կ'ապրի, իր քահանայութիւնն ալ անվախճան է: Ուստի նաեւ կրնայ վերջնականապէս փրկել անոնք որոնք իր միջոցաւ Աստուծոյ կու գան, որովհետեւ միշտ կենդանի ըլլալով՝ տեւաբար բարեխօս կ'ըլլայ անոնց համար:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ԴՈՒՎԱՍԻ 19.12-28** Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախքան մեկնիլը, կանչեց իր տասը ծառաները եւ իւրաքանչիւրին հարիւր արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. *«Շահարկեցէ՛ք այս դրամը մինչեւ վերադարձս»*: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր զրկեցին իր ետեւէն, ըսելով. *«Չենք ուզեր որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»*: Երբ որ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, զիտնալու համար թէ ի՞նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. *«Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ»*: Տէրը ըսաւ. *«Ապրի՛ս, բարի ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզ տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեն»*: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. *«Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»*: Տէրը ըսաւ. *«Քեզ ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեն»*: Երրորդը եկաւ եւ ըսաւ. *«Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, զայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախճայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ որ քուկդ չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած»*: Տէրը անոր ըսաւ. *«Չար ծառայ, քու խօսքովդ քեզ*

պիտի դատեն: Քանի գիտէիր որ կ'առնեն ինչ որ իմս չէ եւ կը հնձեն ինչ որ չեն սերմանած, ինչո՞ւ ուրեմն դրանս սեղանաւորներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս զայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէք իրմէ դրանը եւ տարէք տուէք անոր որ տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէ՛ք,- ըսաւ ան,- ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց թագաւոր ըլլան, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէք զանոնք»:

Այս խօսքերը ըսելէ ետք Յիսուս շարունակեց իր ճամբան դէպի Երուսաղէմ: